

Կ Ո Ն Գ Ա Կ

ԳԻՈՐԳ ԾԱՌԱՅ ԲԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆ-  
ՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՓՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍ-  
ԿՈՊՈՍԵՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ  
ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՑՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱ-  
ՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՐԱ-  
ՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑ-  
ԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ Է.Ջ.ՄԻԱԾՆԻ

ՍԻՆՕԳԻ ՍՐԲՈՑ Է.ՋՄԻԱԾՆԻ

Ծանուցանմբ:

Ի մատենադրաց անտի մերոց և օտա-  
րաց հաւաստեալ զիտեմք, զի առաքինի  
և բարեգործ նախնիք մեր ի հնումն բա-  
զում աշխատութեամբ պատրաստէին ի գա-  
ւառս զաւառս զվանորայս և ի նոսին  
զիւսակրօն միաբանութիւնս, որ զցայդ  
և զցերէկ աշխատէին անձնուրացութեամբ,  
և ժողովեալ զմանկտին Ազգիս կրթէին  
ուսմամբ և գիտութեամբ, մինչ զի յազ-  
գայնոց մերոց ոմանք թէ՛ յեկեղեցակա-  
նաց և թէ՛ յաշխարհականաց՝ յառաջին  
իսկ աստիճան ուսման և քաղաքակրթու-  
թեան ամբառնային,-- քաջայայտ իսկ պար-  
տի լինիլ և Անդամոցդ Աինօղի ժամանա-  
կըն օսկի գարունն շայաստանի առ երրորդ  
Ղուսաուրջօք շայաստանեայցս՝ երանելի  
Թարգմանչօքն ասեմ և նոցուն աշակեր-  
տօք, որպէս և ցարդ վանօրէից ոմանց ա-  
նուանք յորջորջին Գպրեվանք ի պատ-  
ճառս լինելոյ Գպրատանց ի նոսին ի կրթ-  
թութիւն մանկանց Ակեղեցւոյ: Այլ յետ  
ժամանակաց ի բառնալ քաղաքական իշ-  
խանութեան յԱզգէս, և ի բաժանիլ հոգե-  
ւոր իշխանութեան եկեղեցական կառավա-  
րութեանն յերկուս և յերկու ճիւղս, յան-

միաբանութենէ նոցին և յանհոգութենէ  
իշխանաց Ազգիս մանաւանդ յատելութե-  
նէ և ի նախանձուէ և յարտաքին պատ-  
ճառաց՝ բարձի թողի եղեն այն գեղեցիկ  
վանական կարգք յայտոսիկ կողմունս մին-  
չև ցայսօր ժամանակի, և վանօրայք մը-  
նացեալք թափուր՝ ոմանք յուսանող ա-  
շակերտաց և յուսուցչաց, և բազումք ըստ  
ամենայնի ի միաբանակից եղբարց և ամա-  
յի ի մարդկանէ, ուստի և այժմեան պատ-  
րաստեալքն ի քահանայութիւն ունայն ի  
հարկաւորն գիտութեանց և կրթութեանց:  
Այսն որոյ յօրէ ամբառնալոյ մերոյ յԱ-  
թոռ շայրապետութեան ամենայն շայոց  
ոչ երբէք անփոյթ արարաք ի թիւս այլոց  
ամենայն ներքին և արտաքին ուղղու-  
թեանց՝ հոգալ և զվանական Գպրոցաց-  
այլ իբրև կարևորագոյն խնդիր և միան-  
գամայն օգտակար առարկայ փութացաք  
յամին 1869 հաստատել զկանոնս կառա-  
վարութեան վանական Գպրոցաց պատ-  
րաստեալն յԱւսումնական յանձնաժողո-  
վոյն մեծի Աթոռոյս. զոր Արարատ ամսա-  
գիրն ի նոյն իսկ ամին հրատարակեաց ի  
լուր ամենից, և ի գործադրութիւն վա-  
նահարց վանօրէիցն:— Բայց որովհետև՝  
որպէս պարզապէս տեսանեմք յօրագիրս  
Աինօղիդ՝ ի հարցաքննութեան թերթից  
քահանայացու Գպրաց, զի Առաջնորդք  
վիճակաց կողմանցս և Յաջորդք նոցին,  
մանաւանդ Արևանայ վիճակի, յակամա-  
յից ստիպեալ ի կարևորութենէ քահա-  
նայի՝ առաջի առնեն զձեռնադրելի անձինս  
ի Աինօղդ առ ի ընուլ զհոգևոր պէտս ժո-  
ղովրդեանն. բայց տեսանելով մեր, զի փո-  
խանակ ի յառաջադիմութիւն անդր փու-  
թացուցանելոյ զժողովուրդն՝ բարոյական

կրթութեամբ, որ ըստ օրէ տղիտութեան տան պատճառս՝ զանուսումն և զխմբարս ձեռնադրելով ի քահանայ. ուստի առ ի զառաջ առնուլ այնպիսի անկարգութեանց պատճառելոց ի տղիտութենէ՝ ձեռնադրելի գիւղական՝ Վարաց՝ ի բարոյական վնասումն ուղղութեան պարզամիտ ժողովրդեան և բարեկարգութեանց Ակեղեցւոյ, առաջադրելիք Մինօղիդ փութացուցանել զպատուէր հրամանի առ ամենայն Առաջնորդս և Յաջորդս վիճակաց, զի յատուկ վերահասութեամբ իւրեանց պարտաւորեսցեն այսուհետև զամենայն քահանայացու զպիրս, որ չիցեն ուսեալք ի Հոգևոր դպրոցս, մանաւանդ գիւղօրէիցն, անշուշտ նախ քան զսկզբնաւորութիւն զրազրութեանց, որ վասն ձեռնադրութեանն, ուսանել քաղաքացի Բնծայացւոց ի Հոգևոր Վարոցս, իսկ գիւղացւոցն ժողովեալ ի վանօրայս մէն մի գաւառաց ուսանիցին ի Վանական Վարոցն զհարկաւորն քահանայական կոչման գիտելիս յընթացս զոնէ երկց ամաց. և ապա ստացեալ ի Վանահօրէն կամ ի Տեսչէն վանական զըպրոցի զվաւերական վկայագիր վասն ուսման և վարուցն, ընդ նմին և ի ժողովրդոց, յոյր Ակեղեցւոյ վերայ ունին ձեռնադրել՝ զհանրազրութիւն ըստ զօրութեան Բ. յօդուածոյ կանոնական կոնդակի մերոյ տուելոյ յամին 1868, առաջի արասցեն մերձաւոր Հոգևոր իշխանութեան առ ի առաջարկել սահմանեալն կարգաւ ի Մինօղի համաձայն Գ. յօդուածոյ այնք Աոնդակի մերոյ. և ըստ այնմ Մինօղի շարունակեսցէ զգործնական զրազրութիւնսն վասն վերածել տալոյ զնոսա յաստիճան քահանայութեան. իսկ յետ ձեռնադրու-

թեանն՝ պարտէ ձեռնադրող եպիսկոպոսին զնորընծայ քահանայն ուսուցանել տալ՝ կամ ի ձեռն գիտուն քահանայի անղեոյն, և կամ առաքել յիւրաքանչիւր գաւառի վանս, ուր զկրթութիւն էառ, առ ի ծանօթանալ լիովին անդանօր՝ համաձայն Ժ. Ա. յօդուածոյ կանոնական Աոնդակին մերոյ Վառասնօրեայ պահեցողութեամբ՝ արարողութեանց և կարգաց Ակեղեցւոյ և Հոգևոր օրինակատարութեանց ժողովրդեան, և ապա՝ թոյլատրել նմա առնել յիւրումն Ակեղեցւոյ զքահանայութիւն :

Այլ և լսելիք, զեպիսկոպոսունք ոմանք յԱռաջնորդաց և Յաջորդաց վիճակաց կողմանցս երբեմն առանց լուծման Մինօղի ձեռնադրեն զքահանայս զտարկաւագունս և զկղերիկոսս պատճառելով թէ իցեն նոքա որդիք քահանայից : Բայտ որում և բազումք յուսացեալ ի Վահանայաորդի լինել իւրեանց՝ ոչ ուսանին ի ժամանակին զհարկաւոր գիտելիս և ոչ պատրաստեն զինքեանս ըստ արժանեոյն կարգի քահանայութեան, այլ անցուցանելով զցոփական կեանս բազմատեսակ մոլութեամբք՝ ի ձեռնադրութեանն պահու ստացեալ ի ժողովրդոց ոմանց զվկայադիր դիմեն առ Առաջնորդս, և իբր աղաթք և որդիք քահանայից անարգել ձեռնադրին, և այնուհետև լինին ի մէջ ողորմելի ժողովրդեան առ ի թրայթակղութեան և անկարգութեան անուղղայ զնացիւք իւրեանց, որպէս բացայայտ երեւի ի գործս քննութեանց Մինօղի. ուստի առաջադրելիք խստիւ պատուիրել և զայս ամենայն Առաջնորդաց և Յաջորդ եպիսկոպոսաց ձեռնադրել երբէք զոք յաստիճան քահանայութեան,

սարկաւազութեան և կղերիկոսութեան առանց լուծման և անօրէնութեան Մինօղի, և մի տայցեն զիրաւունս քահանայացուաց կրելոյ զուրար ի յունս առանց աստիճանի սարկաւազութեան ընդդէմ եկեղեցական կանոնաց, այլ ըստ ամենայնի վարեցին համաձայն Հայաստանեայց Ակեղեցոյ ընդհանուր կարգադրութեան:

ԳԷՈՐԳ Գ.

ԿԱՌՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Թ. 42

ՈՒՅԻՆ. 1872

Յունիվ. 27

Ի ՄԱՅՐ ԱՅՈՌՍ Ի Ս. ԷՋՄԻԱՏԻՆ:

Սոյն այս Հայրապետական Կոնդակի պարունակած պատուէրք կարի հարկաւոր և անհրաժեշտ են Ս. Եկեղեցոյ մերոյ բարեկարգութեան համար, որով ինչ ինչ զեղծմունք և ազգի ազգի վնասք, որք կը յառաջանային Աւետական գրութեամբք ձեռնադրուած տգէտ քահանայներէն, այսուհետեւ կը յուսամք զի նոյնպիսիքն կանհասան:

Հետեւեալը կը յանձնենք Երեւանոյ Գեր. Փոխ-Փեմակալին և Հ. Նախիջևանայ Արք. Փոխանորդին խորին ուշադրութեանց:

ԾԻԱԿԱԼՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ.

Ա.

Եթէ ընթերցող Հայր յիշէ, մենք ներկայ տարոյս Արարատի ամատետրակների մէկի միջումը խօսում էինք թէ ի՞նչ օգուտ և նշանակութիւն ունին և պիտի ունենան ծխական դպրոցները Հայի համար, այժմ նոցա վեճակի վերայ ենք անում մեր նկատողութիւնը: Ընցեալը միշտ ներկային պէտք է ըստ որում անցեալի փորձովը մենք պէտք է գաննել ներկայի ուղղութիւնը. բայց (ցաւելով ենք ասում) որ շատ պարզ և հաստատուն փորձերը որոնք մեզ համար արեան գնով նստել են, մինչ

անգամ շուտ և շուտ մոռացուել և անօգուտ դրնացել են Հայի համար: Ընչո՞ւ. . . որ կարճ և վճռողական պատասխանը միշտ լալուճ է «տղիտութիւն», տղիտութիւնն է յիրաւի, որ այսօրվան որը համարեա բոլոր Հայերը միաբերան դուռում են «թէ առանց ուսումի մեզ փրկութիւն և ճար չըկայ», Բայց և այդպէս, այդ ուսումն ասացեալ բանք ի՞նչպէս պէտք է ձեռք բերուի՝ տարածուի և արդիւնաւորուի. մտածողները շատ քիչ են, իսկ հոգացողները, չեմ կարող ասել թէ քանի հատ, Ուրեմն ի՞նչ ասել է դպրոց և ուսումն երբ զեղջուկ Հայր անտարբեր և անփութիս է բոլորովին և զեռ ևս:

Ազգ ասելով՝ կամ Հայ գրելով՝ այս տեղ մենք չպէտք է հասկանանք մայրաքաղաքներումը և քաղաքներումը լինող մի քանի հազար մարդիք, որոնք ուսումն ունին կամ գոնէ հոգալու կարողութիւն և հասկացողութիւն: Ազգը Հայի համար գումարվում է երեք և կէս միլիոնից աւելի՝ զեղջուկ երկրագործից, որը դարաւոր փորձերից յետոյ զեռ ևս ապրում և մշակում է այնպէս՝ որպէս թէ ամենեկին չէ անցել այդ դարերի փորձութեանց միջով և ահա այս օրս նորա պիտի կրթուին, ուսանին և շարունակեն: Ի՞նչ տեղ . . . ծխական դպրոցներումը. որի ձեռքով, քահանաների և ուսուցիչների, Եթէ չկայ դպրոց, իսկ դպրոցին ուսուցիչ, ուրեմն Հայը դարձեալ մնում է անկիրթ՝ և այս մինչ երբ:

Բ.

Այդ ո՞վ չգիտէ՝ որ այդպէս է պարոն կասեն մեզ մեր ընթերցողները «այո՞ դու էլ ես էլ և շատերն էլ չգիտենք իմ պարոն, եթէ գիտենք՝ այդ բաւական չէ, պէտք է հոգանք, իսկ երբ չենք հոգացել և ոչ մի բան, և եթէ արածներս սխալ է, այս նշանակում է՝ որ չգիտենք:

Պէտք է ասելով գործը չէ հոգացվում, և գործը եթէ նւատակ և ուղղութիւն չունի, մի և նոյն է թէ չարած: Տաս տարուայ միջոցում, որքան և որքան դպրոցներ առաւօտեան ծաղկի պէս բաց և խուփ են եղել. անհախառակելի է այս: Գուր կասէք, որ այդ ևս լաւ նշան է, ըստ որում առանց փութութեան և փորձերի ոչ մի բան չէ հիմնա-